

# ՍԱՂՄՈՍ 40

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստված օգնում է Իր ծառային	Փորձության մեջ հա- րատևող հավատք	Նեղությունից ազատ- վելու համար գոհու- թյուն, օգնության հա- մար աղոթքի հետ միասին	Փառաբանության երգ	Փառաբանության երգ և օգնության հա- մար աղոթք
<u>MT ներածություն</u>				
«Գլխավոր երաժշտին, Դավթի Սաղմոսը»				
40:1-3	40:1-3	40:1-3	40:1-3	40:1 40:2 40:3
40:4-5	40:4-5	40:4-5	40:4-5	40:4 40:5
40:6-8	40:6-8	40:6-8	40:6-8	40:6-7ա 40:7բ-8
40:9-10	40:9-10	40:9-10	40:9-10	40:9-10
40:11-12	40:11-12	40:11-12	40:11 Օգնության աղոթք	40:11
40:13-17	40:13-15 40:16-17	40:13-15 40:16-17	40:12-15 40:16-17	40:12 40:13-14ա 40:14բ-15 40:16 40:17

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն

կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

## **ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 40:1-3**

- <sup>1</sup>Համբերությամբ սպասեցի ՏԻՐՈՋԸ,  
Եվ խոնարհվեց դեպի ինձ ու լսեց իմ աղաղակը:  
<sup>2</sup>Նաև հանեց ինձ ահռելի գուրից, տղմալի կավից,  
Ոտքերս վեմի վրա կանգնեցրեց ու քայլերս հաստատեց:  
<sup>3</sup>Եվ բերանս մի նոր երգ դրեց՝ մեր Աստծո փառաբանությունը.  
Շատերը տեսնելու ու վախենալու են  
Ու Տիրոջն են վստահելու:**

**40:1-3** Սաղմոսերգուն փառաբանում է ՅԱՀՎԵԻՆ անցյալում Իր փրկագործությունների համար: ՅԱՀՎԵՆ լսեց նրա աղոթքները (այսինքն՝ «խոնարհվեց», BDB 639, KB 692, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, և «լսեց», BDB 1033, KB 1570, *Qal* ԱՆԿԱՏԱՐ):

#### **ՅԱՀՎԵՆ՝**

1. հանել էր իրեն կորստյան գուրից (բառացի՝ «իրարանցման՝ աղմուկի գուրից», BDB 92 ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ BDB 981, տես՝ Սաղմ. 69:2, սա կարող է լինել մահվան ջրի կամ ջրհեղեղի նկարագրությունը լինի (տես՝ Սաղմ. 18:4, Սաղմ. 18:16):
2. հանեց վեր տղմալի կավից  
ա. տիղմի կիրառությունը փողոցներում – 2 Թագ. 22:43, Միքիա 7:10, Չաբ. 9:3, 10:5  
բ. տիղմի գործածությունը գուրի մեջ – Երեմ. 38:6  
գ. գործածվել է փոխաբերական իմաստով նեղության համար – Սաղմ. 40:2, 69:14 («գուր» նաև նշվում է Սաղմ. 69:15-ում)  
դ. հավանաբար նկատի ունի *Շեղը* (այսինքն՝ մահը, UBS *Ձեռնարկը*, էջ՝ 381)
3. ոտքերը վեմի վրա կանգնեցրեց ու քայլերը հաստատեց – աստվածահաճո, հավատարիմ ուխտի հետևորդները նրանք էին, ովքեր քայլում էին ուղիղ, բարձր, անխափան ճանապարհով (տես՝ Սաղմ. 17:5, 18:36, 37:31, 44:18, 73:2, 94:18, Հոր 23:11, 31:7):
4. նոր երգ դրեց նրա բերանը, փառաբանության երգ – նոր երգերը մշակութային կերպ էին հանդիսանում ՅԱՀՎԵԻ փրկագործությունները ընդունելու և Նրան փառավորելու համար (տես՝ Ելից 15, Դատավորաց 5, 2 Օրինաց 32), տես՝ Սաղմ. 33:2-ի գրառումը, նաև՝ Սաղմ. 96:1, 98:1, 144:9, 149:1, Եսայի 42:10, Հայտն. 5:9, 14:3:

ՅԱՀՎԵԻ կողմից սաղմոսերգուին ազատելու նպատակը պարզապես հատուկ վերաբերմունք ցույց տալը չէր, այլ Իր ուխտի հետևորդին օրհնելը և պաշտպանելը, որպեսզի մյուսները (այսինքն՝ «շատերին», BDB 912 I) դառնան ուխտի հետևորդներ:

1. տեսնելու են – BDB 906, KB 1157, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
2. վախենալու են – BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
3. վստահելու են – BDB 105, KB 120, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

**40:1 «համբերությամբ սպասեցի»** Սա ԱՆՈՐՈՇ ԲԱՑԱՐՉԱԿ և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ Է՝ միևնույն արմատից (BDB 875, KB 1082)՝ կիրառված արտահայտելու ուժգնություն:

❖ «**խոնարհվեց/թեքվեց**» Այս ԲԱՅՆ (BDB 639, KB 692, տես՝ Սաղմ.17:6, 88:2) նշանակում է «թեքվել»: Նկարագրությունն այնպիսին է, որ կան ՅԱՀՎԵՆ թեքել է՝ խոնարհել Իր ականջը, որ պարզ լսի, կան էլ ՅԱՀՎԵՆ է խոնարհվել լսելու համար (տես՝ Հոր 15:29):

**40:2 «վեմ»** Տես Սաղմոս 18:13-ի գրառումը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 40:4-5**

**<sup>4</sup>Երանի՛ այն մարդուն, որ հույսը դնում է ՏԻՐՈՋԸ վրա  
Ու չի նայում հպարտներին ու ստի ետևից գնացողներին:**

**<sup>5</sup>Շատ են Քո գործերը, ո՛վ իմ ՏԵՐ Աստված,  
Հրաշալիքներդ ու մեզ համար ունեցած խորհուրդներդ  
Ո՛վ կարող է հերթականությամբ թվել Քո առջև.**

**Եթե ես պատմեի ու խոսեի դրանց մասին,**

**Դրանք ավելի են, քան կարելի է համրել:**

**40:4-5 «Երանի՛ այն մարդուն»** Սա այս պարբերության առանցքային միտքն է: Այս տերմինը (BDB 80) կիրառվում է Սաղմոսներում 26 անգամ: Տես ամբողջական գրառումը Սաղմ. 1:1-ում և Հատուկ Թեմա. Օրհնված (ՀԿ): Սաղմոս 41 մեկնարկում է այս արտահայտությամբ: Այն հիմնականում գործածվում է Սաղմոսներում և Առակացում (այսինքն՝ Իմաստասիրական Գրականության մեջ), որը կենտրոնանում է հաջողակ և բարգավաճ կյանքի վրա:

Երանելի վիճակի համար տրված պատճառները հետևյալն են՝

1. ով հույսը դնում է ՅԱՀՎԵԻ վրա
2. ով չի նայում (BDB 815, KB 937, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) հպարտներին (LXX, NRSV, TEV, տես՝ #2,3, նկատի ունի կուռքերին)
3. ով չի նայում (BDB 962, KB 1312, *Qal* ԴԵՐԲԱՅ, բառը ՀԿ-ում կարելի է գտնել միայն այստեղ):

Համար 5-ում ՅԱՀՎԵԻ հատկանիշներն են թվարկվում՝

1. շատ են Քո հրաշալիքներդ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԱՇԱԼԻ ԲԱՆԵՐ և նկատեք Սաղմ .40:5)
2. շատ են նրա խորհուրդները Իր ուխտի ժողովրդի նկատմամբ
3. ոչ ոք չի կարող համեմատվել Քո հետ (տես՝ Սաղմ.16:2, Ես.6:8-10, այսինքն՝ միաստվածություն, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ)
4. Նրա հրաշքներն ու խորհուրդները բազմաթիվ են հաշվելու համար  
ա. պատմելու համար – BDB 616, KB 665, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ  
բ. խոսելու համար – BDB 180, KB 210, *Piel* ԸՂՁԱԿԱՆ

**40:5** Այս համարը կարծես թե արտացոլում է ՅԱՀՎԵԻ մեծ գործերը Իսրայելին ազատելիս՝ հատկապես Ելիցը: «Մեզ» դերանունը պետք է որ նկատի ունենա հավատքի համայնքը՝ Աբրահամի սերնդից (տես՝ Ծննդ. 12:1-3): Ուխտի համայնքի ներսում հավատարիմներ և անհավատներ կան (տես՝ Սաղմ. 40:4), մինչդեռ ՅԱՀՎԵՆ պահպանում է ամբողջ համայնքը: Նա Իսրայելի համար ունի տիեզերական, փրկության նպատակ (տես՝ Սաղմ. 33:10-12):

«Հրաշքներ» տերմինը (BDB 810, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԱՇԱԼԻ ԲԱՆԵՐ) հաճախ գործածվում է Ելիցի հետ առնչությամբ:

1. ԲԱՅ – Ելից 3:20, 34:10, 2 Օր. 28:59
2. ԳՈՅԱԿԱՆ – Ելից 15:11

Ելիցը ՅԱՀՎԵԻ Իր խոստումներին հավատարմության մեծ ապացույցն էր (տես՝ Ծննդ. 15:12-21) և Իր գործության ու Իսրայելի համար Իր նպատակի դրսևորում (տես՝ Ծննդ. 12:3):

❖ **«քան կարելի է հաշվել»** Սա կարող է լինել բառացի կապ Աբրահամին տրված խոստումներին, որ նրա սերունդները բազմաթիվ են լինելու՝ անհամար (այսինքն՝ ինչպես փոշին, տես՝ Ծննդ. 13:16, 28:14, Թվոց 23:10, ինչպես ավազը – տես՝ Ծննդ. 22:17, 32:12, ինչպես աստղերը՝ տես՝ Ծննդ. 15:5, 22:17, 26:4): ՅԱՀՎԵԻ մեկ այլ հրաշք է անպտուղ, տարեց գույգը:

Այս տեքստի համար գեղեցիկ զուգահեռ տեքստ կարող է հանդիսանալ Սաղմ. 139:17-18, որը նույնպես նշում է ՅԱՀՎԵԻ կողմից իրականացրած բազմաթիվ փրկագործություններ: Նկատել՝ որ այն նշում է «դրանք ավագից էլ շատ են», որը մեկ այլ ակնարկ է Աբրահամի սերունդներին տրված խոստմանը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 40:6-8**  
**Չոհ ու ընծա Դու չցանկացար, իմ ականջները բացեցիր .**  
**Ողջակեզ ու մեղքի պատարագ Դու չպահանջեցիր:**  
**Վյն ժամանակ ասացի. «Ահա գալիս եմ ես .**  
**Գրքի հատորում գրված է իմ մասին .**  
**Քո կամքը կատարելն իմ բերկրանքն է,**  
**Ո՛վ իմ Աստված, այո՛, Քո օրենքն իմ սրտում է»:**

**40:6-8** Այս պարբերությունը գործածում է Մովսիսական Օրենքը որպես գրական փաթեթ սաղմուտերգուի նոր անձնական փոխհարաբերության համար՝ հիմնված Երեմ. 31:31-34-ի նոր ուխտի հասկացության պես գաղափարի վրա (այսինքն՝ Օրենքը իմ սրտում է, տես՝ Եսայի 51:7): Երկրպագության, հնազանդության, ծառայության և հարատևության մոտիվացումը ներքուստ է (տես՝ 2 Օր. 6:6):

Չոհաբերության համակարգը ՅԱՀՎԵԻ մեթոդն էր Իր ուխտի ժողովրդի միջից մարդկանց մեղքի հարցը լուծելու համար: Անմեղ կենդանիները մեռնում էին մեղավոր մարդկանց փոխարեն (տես՝ Եզեկ. 18:4,20, Հռոմ. 6:23): Այն տիպաբանության օրինակ էր գալիք Աստծո Գառան համար, որը վերցնելու էր աշխարհի մեղքը (տես՝ Հովի. 1:29, Մարկ. 10:45, 2 Կորնթ. 5:21, Եբր. 10:1-18):

Մովսիսական ուխտի հետ խնդիրն այն էր, որ շատ հրեաների համար այն դարձավ արտաքին բարոյական կանոն՝ անձնական մտերմիկ հավատքի միջոց դառնալու փոխարեն (տես՝ 2 Օր. 10:16, 30:6, Երեմ. 4:4, 9:25, Հռոմ. 2:28-29):

ՆԿ-ը դիտարկում է այս պարբերությունը (Սաղմ. 40:6-8) որպես ի վերջո իրագործված Հիսուսի կյանքի և մահվան միջոցով (տես՝ Եբր. 10:5-7 LXX-ից): Նա է այս բոլոր տեքստերի կատարյալ իրականացումը: Նա է «իդեալական Իսրայելացին», որը մահացավ բոլորի փոխարեն (տես՝ Եսայի 53):

**40:6** Գոյություն ունեն չորս տարբեր բառեր, որոնք կիրառվում են նկարագրելու Իսրայելի տարբեր զոհերը (տես՝ Ղևտացիների 1-7):

1. զոհաբերություններ – BDB 257, ընդհանուր տերմին զոհերի համար, որտեղ կենդանու մի մասը ուտվում էր իրենց Աստծո հետ հաղորդակցվելիս:
2. կերակուրի զոհեր – BDB 585, սկզբնապես նկատի էր առնված թե կենդանական և թե ցորենի զոհեր, սակայն սկսեց BDB 750 II, վերաբերում էր մի զոհաբերության, որն ամբողջովին այրվում էր զոհասեղանի վրա
3. ողջակեզներ – BDB 750 II, վերաբերվում էր մի զոհի, որն ամբողջությամբ այրվում էր զոհասեղանի վրա
4. մեղքի պատարագներ – BDB 308, երկու ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻՑ մեկը. սա հազվադեպ էր, այն թարգմանվում է «մեծ մեղք» Ծննդ. 20:9-ում, Եից 32:21, 30, 31, 4 Թագ. 17:21-ում, և «մեղք» Սաղմ. 32:1, 109:7-ում: Այստեղ այն կարծես թե նկատի ունի մեղքի պատարագին զուգահեռականության պատճառով, սակայն կիրառությունը բացառիկ է:

Այս համարը զոհաբերության համակարգի մերժման մասին չէ, այլ չարաշահման (տես՝ 1 Թագ. 15:22, Սաղմ. 50:8-14, 51:16-17, 69:30-31, Եսայի 1:11-15, Երեմ. 7:22-23, Ովսեա 6:6, Ամոս 5:21-22):

**NASB, NKJV**  
**NASB լուսանցք**  
**NRSV լուսանցք**  
**LXX**

**«բացեցիր»**  
**«փորեցիր կամ պատռեցիր»**  
**«փորեցիր»**  
**«մարմին, որը պատրաստեցիր ինձ համար»**

Այս ԲԱՅԸ (BDB 500, KB 496, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) ունի այս նշանակությունը միայն այստեղ: Այն կիրառվում է՝

1. ջրհոր փորելու համար – Ծննդ. 26:25, Թվոց 21:18
2. գերեզման փորելու համար – Ծննդ. 50:5
3. փոս փորելու համար – Ելից 21:33
4. փոխաբերական իմաստով՝ որոգայթ փորելուն – Սաղմ. 7:14-16, 57:6, 119:85, Առակ. 16:27, 26:27, Երեմ. 18:20 (այսինքն՝ համեմատեք Երեմ. 6:10-ի հետ)

NASB տարբերակի լուսանցքում առաջարկվում է «նեղրել», հավանաբար սկիզբ է առնում Ելից 21:5-6 կամ 2 Օր. 15:12-18-ից, որտեղ ծառան դառնում է ընտանիքի մշտական անդամը (տես՝ 2 Օր. 15:17, այլ ԲԱՅ և «ականջ» ԵԶԱԿԻ թվով):

LXX թարգմանությունը պետք է որ հիմնված լինի տարբեր երբայերեն ձեռագրի վրա կամ այն վերափոխել է միտքը, զգալով որ «ականջներ» բառը կարող է ներկայացնել ամբողջ մարմինը: LXX տարբերակը վաղ եկեղեցու գործածելիք տարբերակն էր և այն մեջբերված է Եբր. 10:5-ում (տես՝ Եբր. 10:1-18):

Համատեքստում ԲԱՅԸ վերաբերում է հավատքի և վստահության նոր փոխհարաբերությանը՝ հաստատված նոր ուխտի օրինակով (այսինքն՝ «Քո Օրենքը իմ սրտում է», տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:26-27), որը թույլ է տալիս, որ մեղավոր մարդիկ հստակ ճանաչեն ու կատարեն ՅԱՀՎԵԻ կամքը (այսինքն՝ Սաղմ. 40:8):

#### **40:7**

**NASB, NKJV**  
**NRSV, TEV,**  
**NRSV, REB**  
**NJB**  
**LXX**  
**NET**

**«ահա, ես գալիս եմ»**  
**«Ահա ես»**  
**«Ահա ես, ես գալիս եմ»**  
**«Նայիր, ես եկել եմ»**  
**«Տես, ես գալիս եմ»**

«Ահա ես» թարգմանությունը բխում է միևնույն ձայնարկության կիրառությունից (BDB 243), որն օգտագործվում է Ես. 6:8-ում համադրված «Ես գալիս եմ» (մեկ այլ ԲԱՅ էսայի 6:8-ից) ԲԱՅԻ հետ (BDB 97, KB 112, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ):

Այն մարդու կյանքի համար ՅԱՀՎԵԻ կամքին և ծրագրին հասանելի լինելու և նվիրումի դարձվածք է (տես՝ Սաղմ. 40:7բ-8): Այս համատեքստում (այսինքն՝ զոհ) այն կարող է վերաբերել այն փաստին, որ ՀԿ-ում հայտնի, գիտակցված մեղքի համար զոհ չկար (տես՝ Ղևտ. 4:2, 22, 27, 5:15-18, 22:14, Սաղմ. 51:16-17): Միայն կրքի կամ տգիտության մեղքերն էին ծածկվում (այսինքն՝ ոչ դիտավորյալ): Սաղմոսերգուն տեսնում է, որ միակ հարմար զոհը ինքն էր (տես՝ Հոմ. 12:1): Սա անշուշտ Աստծո Գառան նախատիպն էր (տես՝ Հովհաննես 1:29), ով եկավ Իր անձը տալու համար (տես՝ Մարկոս 10:45, Եսայի 53):

❖ **«Գրքի հատորում»** Որոշ գիտնականներ սա դիտարկում են որպես ՅԱՀՎԵԻ Մովսեսին ուղղված հայտնությանը վերաբերող: Թագավորին տրվում էր մի կրկնօրինակ (տես՝ 2 Օրինաց 17:18-20, 3 Թագ. 2:3, 4 Թագ. 11:12): Աստվածաշունչը կիրառում է «գիրք (գրքեր)», ցույց տալու յուրաքանչյուր մարդու համար ՅԱՀՎԵԻ ծրագրերը (տես՝ Սաղմ. 139:1-6,16) կամ բոլոր մարդկանց կյանքի հիշատակը, որոնք մի օր կանգնելու են Նրա առջև, որպես իրենց դատավորը: Այս նկարագրությունը

արտահայտվում է երկու գրքերում՝ կյանքի գիրքը և գործերի գիրքը: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏԾՈՒ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԸ:

**40:8 «Քո կամքը կատարելն իմ բերկրանքն է»** Ինչպիսի՛ արմատական փոփոխություն է ծննդոց 3-ից: Աստծո խեղափոխված «պատկերը» վերականգնված է: Ամենախորը մակարդակի փոխհարաբերությունը դարձյալ հնարավոր է: Անկման անկախ հոգին փոխարինված է Աստծուց կախված հոգով:

Հիսուսը մեզ համար նմանօրինակ ծառայի վերաբերմունքի օրինակ ծառայեց (տես՝ Մատթ. 26:39, Հովհ. 4:34, 5:30, 6:38):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 40:9-10**

<sup>9</sup>Արդարություն քարոզեցի մեծ հավաքում,

Ահա շուրթերս չգապեցի, ո՛վ ՏԵՐ, Դ՛ո՛ւ գիտես:

<sup>10</sup>Սրտիս մեջ չթաքցրի Քո արդարությունը .

Հռչակեցի Քո հավատարմությունն ու փրկությունը,

Քո ողորմությունն ու ճշմարտությունը մեծ ժողովքից չձածկեցի:

**40:9-10** Սաղմոսերգուն վկայում է ՅԱՀՎԵԻ բնավորության մասին տանարում՝ խորանում (տես՝ Սաղմ. 22:25) պաշտամունքի միջավայրում (այսինքն՝ մեծ հավաքում):

1. Քո արդարությունը – BDB 842, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
2. Քո հավատարմությունը – BDB 53, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀԱՎԱՏԱԼ, ՎԱՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ
3. Քո փրկությունը – BDB 448, տես՝ Հատուկ Թեմա . ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՏԵՐՄԻՆԸ)
4. Քո բարեգթությունը – BDB 338, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED):
5. Քո ճշմարտությունը – BDB 54, տես՝ Հատուկ Թեմա . Ամեն

Սաղմոս 40:11 սրան մի ցանկ է ավելացնում (պարբերությունների բաժանումը անհայտ է):

6. Քո գթությունը – BDB 933
7. Քո բարեգթությունը – BDB 338
8. Քո ճշմարտությունը – BDB 54

Սրանք ՀԿ-ի հրաշալի աստվածաբանական բառերն են, որոնք նկարագրում են, թե ինչպես է ուխտի Աստվածը աշխատում Ադամի որդիների, դուստրերի հետ՝ Աբրահամի հետ ունեցած Իր հատուկ կանչի շնորհիվ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

**40:9 «Դ՛ո՛ւ գիտես»** ՅԱՀՎԵՆ գիտի Իր մարդկանց սրտերը (տես՝ Հեսու 22:22, 1 Թագ. 2:3, 16:7, 3 Թագ. 8:39, 1 Մնաց. 28:9, Սաղմ. 139:2-4, Երեմ. 17:10, 20:12, Դուկ. 16:15, Գործք 1:24, 15:8, Հռոմ. 8:27):

**40:10** Ուշադրություն դարձրե՛ք ԲԱՅԵՐԻ շարքը, որոնցով սաղմոսերգուն հաստատում է իր լիարժեք ու բացահայտ վկայությունը ՅԱՀՎԵԻ մասին՝

1. Ես քարոզել եմ /քարոզեցի/ – BDB 142, KB 163, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ, Սաղմ. 40:9
2. Ես չեմ թաքցրել /չթաքցրեցի/ - BDB 491, KB 487, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, Սաղմ. 40:10
3. Հռչակել եմ /հռչակեցի/ - BDB 55, KB 65, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, Սաղմ. 40:10
4. Չեմ ձածկել /չձածկեցի/ - BDB 470, KB 469, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ

ՅԱՀՎԵՆ ցանկանում է, որ Իր ժողովուրդը բարձրացնի Իր բնավորությունը և գործերը փառաբանությամբ և վկայությամբ, որպեսզի բոլոր մարդիկ, որ ստեղծված են Իր պատկերով (տես՝ Ծննդ. 1:26-27) ճանաչեն և երկրպագեն Իրեն:

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 40:11-12**

**<sup>11</sup>Քո գթությունը մի՛ հեռացրու ինձնից, ո՛վ ՏԵՐ,  
Քո ողորմությունն ու ճշմարտությունը շարունակ թող պահպանեն ինձ:  
<sup>12</sup>Քանի որ անթիվ չարիքներ պաշարեցին ինձ,  
Անօրենություններս ինձ վրա հասան,  
Այնպես որ վեր չեմ կարողանում նայել.  
Գլխիս մազերից շատ են, ուստի սիրտս լքեց ինձ:**

**40:11-12** Այս պարբերությունը նկարագրում է սաղմոսերգուի տվյալ պահի վիճակը: ՅԱՀՎԵՆ հաստատ նրա հետ է, սակայն կան խնդիրներ (մի շարք ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ):

1. անթիվ չարիքներ պաշարեցին ինձ – BDB 67, KB 79, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, այս ցանկը (AB, էջ՝ 247) նկարագրություն է վերցված կատաղի շների ռիմակից, որոնք հարձակվում են իրենց որսի վրա. այս անթիվ խնդիրներն են հակադրվում են ՅԱՀՎԵՐ «հրաշքների» հետ Սաղմ. 40:5-ում:
2. անօրենություններս իմ վրա հասան – BDB 673, KB 727, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ, մի քանի Սաղմոսներում՝ Առաջին Գրքում, սաղմոսերգուն ընդունում է իր մեղքը, տես՝ Սաղմ. 25:11, 31:10, 32:5, 38:4,18, հնարավոր է սա գրական կերպ է բոլոր մարդկանց մեղավոր վիճակը հաստատելու համար:
3. չեմ կարողանում նայել – BDB 407, KB 410, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, հավանաբար կապված է անդադար լացելու՝ սգալու հետ, տես՝ Սաղմ. 69:3, մեղքը մշտապես պատճառ է հանդիսանում Աստծո հետ մեր փոխհարաբերությունների և Նրա կամքը հասկանալու՝ իմանալու մեր կարողության խաթարման:
4. նա ընդունում է, որ իր անօրենությունները շատ են – BDB 782, KB 868, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, «գլխիս մազերից» բնութագրությունը կրկնվում է Սաղմ. 69:4 և կիրառվում է Հիսուսի կողմից, որ ՅԱՀՎԵՆ ճանաչում է մեզ՝ Մատթ. 10:30, որը ՀԿ-յան դարձվածք է, տես՝ 1 Թագ. 14:45, 2 Թագ. 14:11, 3 Թագ. 1:52, Գործք 27:34
5. սիրտս լքեց ինձ (այսինքն՝ թողեց) – BDB 736, KB 806, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ  
Հավատարիմ հետևորդի կյանքը պայքար է իր ներսում բնակվող մեղքի (տես՝ Հռոմեացիների 7) և Աստծո շնորհի ու ողորմության (տես՝ Հռոմեացիների 8) միջև:

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 40:13-17**

**<sup>13</sup>Ինձ ազատել կամեցիր, ՏԵՐ,  
Ինձ օգնության շտապիր, ՏԵՐ:  
<sup>14</sup>Թող ամաչեն ու միասին խայտառակվեն իմ անձը հետապնդողները՝  
Այն կորստյան մատնելու համար:  
Ետ մղվեն ու ամոթահար լինեն ինձ չարություն կամեցողները:  
<sup>15</sup>Թող պապանձվեն իրենց ամոթի համար նրանք,  
Որ ինձ «Վա՛հ, վա՛հ» էին ասում:  
<sup>16</sup>Բոլոր նրանք, որ Քեզ են փնտրում,  
Թող Քեզանով ցնձան և ուրախանան.  
Քո փրկությունը սիրողները շարունակ թող ասեն.  
«ՏԵՐԸ թող մեծարվի»:  
<sup>17</sup>Իսկ ես աղբատ ու կարիքավոր եմ,  
Սակայն ՏԵՐԸ մտածում է իմ մասին:  
Իմ օգնությունն ու ազատագրիչը Դո՛ւ ես,  
Մի՛ ուշանա, ո՛վ իմ Աստված:  
Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը:**

**40:13-17** Սովորականի պես վերջին պարբերությունը աղոթքի խնդրանքների շարք է (ԱՆԿԱՏԱՐՆԵՐ և ՀԱՅՅԱԿԱՆՆԵՐ համագոր գուգահեռականությամբ): Սա շատ նման է Սաղմոս 70-ին՝

1. կամեցի՛ր (BDB 953, KB 1280, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) ազատելու ինձ (BDB 664, KB 717, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՍՈՒԹՅՈՒՆ): AB էջ՝ 247, առաջարկում է ձայնավորի փոփոխություն «վազել» արմատի համար, որը ավելի լավ է զուգորդվում #2-ի հետ:
2. ինձ օգնության շտապի՛ր – BDB 301, KB 300, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 22:19, 38:22, 70:1,5, 71:12, 141:1
3. Թող ամպեն իմ անձը հետապնդողները – BDB 101, KB 116, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՅԱՅԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 35:4, 26, 70:2, 83:17
4. Թող նրանք, որ հետապնդում են իմ անձը խայտառակ լինեն միասին – BDB 344, KB 346, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
5. թող նրանք, որ ուրախանում են ինձ չարություն գործելով, ետ մղվեն – BDB 690, KB 744, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
6. Թող նրանք, որ ուրախանում են իմ ցավով՝ ամոթահար լինեն – BDB 483, KB 480, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
7. Թող նրանք, որ ինձ ասում են. «Ահա, ահա» (տես՝ Սաղմ. 35:21, 70:3), պապանձվեն – BDB 1030, KB 1563, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով  
40:6 համարից սկսած աղոթքները բացասականից փոխվում են դրականի՝
8. բոլոր նրանք, որ Քեզ են փնտրում, թող Քեզանով ցնձան – BDB 695, KB 1314, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով (նկատեք, որ ամբարիշտը «փնտրում» է նրա կյանքը [BDB 134, KB 152], սակայն սաղմոսերգուն փնտրում է ՅԱՀՎԵԻՆ, տես՝ Սաղմ. 40:16)
9. Թող բոլոր նրանք, որ Քեզ են փնտրում՝ ուրախանան – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
10. Քո փրկությունը սիրողները շարունակ թող ասեն . . . - BDB 55, KB 65, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով (հավատարիմ հետևորդները սիրում են ՅԱՀՎԵԻՆ՝ Նրա հայտնված կամքին և ճանապարհին հնազանդվելով, տես՝ 2 Օր. 6:5, 10:12, 11:1, 13, 22, 19:9, 30:15, 16, 19-20)
11. «. . . թող ՅԱՀՎԵՆ մեծարվի» - BDB 152, KB 178, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով (սա հակադրվում է ամբարիշտների ասածին Սաղմ. 40:15-ում)
12. թող ՅԱՀՎԵՆ մտածի իմ մասին – BDB 362, KB 359, *Qal* ՀԱՅՅԱԿԱՆ
13. մի՛ ուշանա – BDB 29, KB 34, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 70:5, այս ձևավորում է *inclusio* Սաղմ. 40:13-ի «շտապի՛ր» խոսքի հետ:

**40:17** Նկատե՛ք, թե ինչպես է սաղմոսերգուն իրեն և ՅԱՀՎԵԻՆ բնութագրում

1. իրեն
  - ա. աղքատ /տառապյալ / (BDB 776)
  - բ. կարիքավոր (BDB 2)
 (Մրանք հաճախ են կիրառվում հավատարիմ հետևորդների համար՝ Սաղմ. 70:5, 86:1, 109:22, այս իմաստով դրանք փոխաբերություն են հոգևոր սովի՝ աղքատության համար, տես՝ Մատթ. 5:3-6)
2. ՅԱՀՎԵՆ (MT տալիս է *Adon*, սակայն որոշ եբրայերեն MSS տալիս են ՅԱՀՎԵ)
  - ա. նրա օգնությունը (BDB 740 I)
  - բ. նրա փրկիչը (BDB 812, KB 930, *Piel* ԴԵՐԲԱՅ)

❖ «Ո՛վ իմ Աստված» Այս Սաղմոսում ՅԱՀՎԵ և *Eyhhyh* անունները հաճախ են գործածվում և համադրված են Սաղմ. 40:5-ում:

1. ՅԱՀՎԵ, Սաղմ. 40:1,3,4,9,11,13 (երկու անգամ), 16
2. *Eyhhyh*, Սաղմ. 40:3,5,8,17

Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, ավելի մանրակրկիտ քննարկման համար, թե ինչպես են ՀԿ-յան հեղինակները կիրառել այս անունները, տիտղոսները Աստծո համար՝ հայտարարելու Նրա բնավորության և գործերի տարբեր կողմերը:



## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեգույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Նկարագրե՛ք Սաղմոս 40:1-10-ի և ապա 40:11-17-ի տրամադրությունը: Ի՞նչն է փոխվել:
2. Թվարկե՛ք և բացատրե՛ք ՅԱՀՎԵԻ բնավորության գծերը Սաղմ.40:10-11-ում:
3. Ինչպե՞ս է կիրառվել քայլելու նկարագրությունը հավատքի կյանքի ընթացքը բնութագրելու համար:
4. Արդյո՞ք Սաղմ.40:5-ը ակնարկում է Ծննդոց կամ Ելից գրքերը, կամ երկուսը միասին: Ինչո՞ւ:
5. Ինչպե՞ս կարող է Սաղմ.40:6բ-ի LXX թարգմանությունը (տես՝ Եբր. 10:5-7) լինի MT-ից այդքան տարբեր:
6. Արդյո՞ք սա Մեսիական Սաղմոս է:
7. Ի՞նչ «գրքի» կամ «գալարի» մասին է խոսվում Սաղմ.40:7բ-ում:
8. Բացատրե՛ք, թե ինչո՞ւ է Սաղմ.40:13-17 վերահայտնվում Սաղմոս 70-ում: